

ԼԵՌՆԱԹԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 փետրվարի 2016 թ.

N 781-Ն

Բ. Ստեփանակերտ

**ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՏՎԹԱՂՆԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի N 4-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *ն ր ո շ ու մ է*.

1. Հաստատել կենդանական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱԹԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեոնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2016 թվականի դեկտեմբերի 2-ի
N 781-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿԵՆԴՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՏՎԹԱՂՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են կենդանական աշխարհի պետական կադաստրի (այսուհետ՝ պետական կադաստր) սվյալների տրամադրման ընթացակարգը և տեղեկատվության տրամադրման պայմանները:

2. Պետական կադաստրի մեջ ներառված՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի վայրի կենդանիների տեսակային բազմազանության (աղնաշարավոր և անաղնաշարավոր կենդանիներ), կենդանական աշխարհի օգտագործման, կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության վերաբերյալ սվյալները տրամադրում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

II. ՏՎԹԱՂՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3. Պետական կադաստրի սվյալները մեկաբարձր ժամկետում, համաձայն դիմումի, տրամադրվում են՝

1) բնական պաշարների և կենսաբազմազանության բնագավառում շահագրգիռ պետական կառավարման և տեղական ինֆրակառավարման մարմիններին.

2) գիտահետազոտական և համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող իրավաբանական անձանց և ֆադաֆացիներին.

3) կենդանական աշխարհի հաշվառում և ուսումնասիրություններ իրականացնողներին.

4) հասարակական կազմակերպություններին:

4. Պետական կադաստրի տվյալները տրամադրվում են լիազոր մարմնի կողմից հաստատված տվյալների տրամադրման ձևերին համապատասխան:

5. Պետական կադաստրի տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է պարբերաբար հրատարակվող տեղեկագրերի, ինտերնետային կայքերի, հայտարարությունների և իրազեկման այլ մատչելի միջոցներով կամ ըստ պահանջի:

6. Պետական կադաստրի տվյալների տրամադրումը ենթակա է մերժման, եթե պահանջվող տեղեկատվությունը պարունակում է՝

- 1) պետական գաղտնիքներ.
- 2) երրորդ կողմի մասին արտադրական կամ առևտրային նշանակության տվյալներ.
- 3) հեղինակային իրավունքը խախտող տվյալներ.
- 4) մրցութային փաստաթղթերում կամ աճուրդներում վերադրվի հիմունքներով տրամադրված տվյալներ.
- 5) նախապատրաստվող ծրագրի, անավարտ կամ ընթացիկ գործունեության մասին չամփոփված տվյալներ.

6) տվյալների ձեռքբերման անհրաժեշտություն, որը պահանջում է լրացուցիչ աշխատանքների և ծախսերի իրականացում:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ